

չմոռցնելու համար իրենց յաջորդող սերունդին մէջ:

1848-ին Պուրէշի հայ դպրոցին ուսուցիչ կը հրաւիրուի Դանիէլ վարժապետ, որ ըստ արձանագրութիւններու կը յաջողի բարեկարգութիւն մտցնել կարճ ատենուան մէջ: Քաջ հայկարան էր: Եկած էր Պոլսոյ պատրիարքին նամակով: Նոյն տարին գերմաներէնի եւ Փրնասերէնի համար ալ երկու ուսուցիչներ կը հրաւիրուին: Գոյութիւն ունէին մանչաց եւ աղջկանց երկու դպրոցներ, առաջինը Մխաբեան եւ երկրորդը Արարատեան անունով:

1858-ի արձանագրութեանց մէջ կը գրտնենք Գրիգոր վարժապետ անուն հայ ուսուցիչ մը, եւ երկու օտար ուսուցիչներ, Բրտալէսքու (ռումէն) եւ Վէլթէր (գերման): Յայտնի է որ արդէն լեզուներու զարկ տալ կը սկսին հայ դպրոցին մէջ՝ հայ տղաքը հրապուրելու համար:

Գէորգ վարժապետ մը կը յիշուի 1861-ին: Անոր հետ կը պաշտօնավարէ նաեւ Փօփէսքու անուն ռումէն մը: Ու ա՛լ անկէ յետոյ ռումէն ուսուցիչը անպակաս է հայ դպրոցէն:

1869-ին քահանայ մըն է դպրոցին ղեկավարը՝ Գարբիէլ քահ. Յարութիւնեան, որուն օրով 41 է աշակերտներուն թիւը, եւ կ'աւանդուին գաղղիերէն եւ հայերէն քերականութիւն, աւետարան, ազգ. պատմութիւն, հայերէն եւ գաղղիերէն վայելչագրութիւն եւ երաժշտութիւն:

1870-ին արդէն դպրոցին տեսուչ կը գրտնենք Գէորգ Մէչտուտեանը՝ որ յետոյ իր մասնաւոր դպրոցը ունեցած է Պոլսոյ մէջ: Իր օրով պաշտօն կը վարեն Քօնսթանտնուպոլսեան, Կրիկօրէ Անդրէէսքու, եւ օրուան քահանաները: Մէչտուտեանի աշակերտները՝ որոնցմէ շատերը կ'ապրին մինչեւ այսօր ալ՝ յարգանքով կը յիշեն անոր անունը: Իր օրով, սակայն, փակուած կը գտնենք աղջկանց դըպրոցը:

«Արարատեան Ուսումնասէր Ընկերութիւնը» 1871 Յունիս 6-ին իր գոյքերը, — երկաթագործի դործարան մը իր յարակից սենեակներով, թափուր գետին մը Արմէնէասքա փողոցին վրայ, 592 Փրանք հնչում դրամ, եւ այլն, — կ'որոշէ յանձնել ազգ. վարժարանին

պայմանաւ որ դպրոցին պարտքերը թեթեւալուծ պէս պիտի բացուի աղջկանց դպրոցը եւ պիտի կոչուի «Արարատեան Օրիորդաց Դըպրատուն»: Այդ աղջկանց դպրոցը հնարաւոր չըլլար սակայն բանալ: Արշակ Ալթունեան որ 1876-ին այցելած է այս կողմերը գրտել կուտայ դառնացած. «Դժբախտաբար աղջկանց դպրոց չըլլալէն դատ, որու համար տեղւոյն գրեթէ բոլոր հայ աղջիկներն իրենց ազգային լեզուն մոռցած՝ վրահերէն կը խօսին, տղայոց դպրոցն ալ շատ ետ մնացած է»: (Տեղեկագրութիւն Հայոց Գաղթականութեան, էջ 35): Մինչեւ 1884 կը շարունակէ Մէչտուտեան իր պաշտօնը՝ վերջին տարիները պաշտօնակից ունենալով Կրիկօրէ Լասքուն: Այդ միջոցին 31-ի իջած էր հայ աշակերտներուն թիւը:

1884-ին պաշտօնի կը կոչուի Մկրտիչ Աշտեան իր տիկնոջ Թեկղի Աշտեանի հետ, օգնական ունենալով երաժիշտ-ուսուցիչ մը՝ Միհրան ձէրանեան:

1888-ին տնօրէնի պաշտօնը կը ստանձնէ Նէկրիչեանու անուն ռումէն մը, աջակից ունենալով Քօնսթանտնուպոլսեանը եւ Յովհ. Պիպէրեանը, այս վերջինը իբր հայերէնի ուսուցիչ: Այդ միջոցին 56 էր հայ դպրոցի աշակերտութեան թիւը, մեծ մասով հրէայ: Նէկրիչեանուն կը պաշտօնավարէ մինչեւ 1904, հետը ունենալով Պիպէրեանը, օր. էլէնա Տէմէթըրէսքուն եւ Յար. քահ. Անդրէասեանը:

Արդէն զգալի է քայքայումը: Դպրոց յաճախող հայ տղոց թիւը երթալով կը պակսի, թէեւ թէ՛ մանչերու եւ թէ՛ աղջկանց վարժարան գոյութիւն ունէր:

Միւս կողմէ դպրոցը հետզհետէ բախտին կը ձգուի, որովհետեւ եկող գացող թաղակաշտութիւնները ուս կը թոթովն ամէն անգամ որ հայ ուղին պահպանելու պարագայ մը մէջտեղ գայ: Դպրոցի աշակերտութեան թիւը ի վերջոյ քսանի կ'իջնէ:

Պետրոս քահ. Մամիկոնեան սապէս կը նկարագրէ Պուրէշի դպրոցին վիճակի 1894-ին (Ռումանահայոց ներկայն եւ ապագայն, էջ 115). «Պուրէշարնակ ազգայինը այժմ ունին երկու վարժարան. Մխաբեան եւ Արարատեան. առաջինն արական սեռին կը վերաբերի եւ երկրորդն՝ իգական սեռին: Մխաբ-